

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի ունեցավ 1960—1961 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը։

Հանդիսության ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերաստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Հանդեսն սկսվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով, ապա Ճեմարանի երգչախումբը երգեց «Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականը։

Հոգևոր Ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը կատարեց հանդիսության բացումը։

Հանդիսության առաջին բաժնում Ճեմարանի ուսանողները գործադրեցին գեղարվեստական մի ծրագիր բաղկացած երգերից և արտասանություններից։

Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարեց հատվածներ Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատայից։

Ուսանողների մանդոլինի նվագախումբը, ղեկավարությամբ Ճեմարանի նախկին ուսանող Խորեն Հակոբյանի (այժմ Երևանի Պետական կոնսերվատորիայի ուսանող), հաջող կերպով կատարեց հայ ժողովրդական յոթ երգեր։

Գ լսարանի ուսանող, շրջանավարտ բարեշնորհ Արշավիր սարկավագ Շաքարյանը, հանուն Հոգևոր Ճեմարանի շրջանավարտների, կարդաց որդիական երախտագիտության ջերմ զգացմունքներով գրված և Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր.

Այս հանդիսավոր պահին, թույլ տվեք նախ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի այս ուսումնական տարվա շրջանավարտ ուսանող եղբայրներիս թարգմանը հանդիսանալ և հայտնել մեր երախտագիտական որդիական զգացմունքներն ու շնորհակալական խոսքերը Ձերդ Ս. Օծության, ինչպես նաև Հոգևոր Ճեմարանի վերատեսչության և դասախոսական կազմին։

Վեհափառ Տե՛ր.

Ձեր գահակալությունից հետո Հոգևոր Ճեմարանը տալիս է իր երրորդ հունձը։ Այս տարի շրջանավարտ են եղել չորս հոգի, որոնք հանձնել են իրենց կուրսային և ավարտական քննությունները։

Հուզիչ է այս պահը, որովհետև պահն է հրաժեշտի։ Այսուհետև մեր ականջին չի հնչելու այս սուրբ հաստատության քաղցրաղողանջ զանգի ձայնը։ Նրան, այսուհետև, կփոխարինեն Մայր Տաճարի զանգերը։ Սակայն ամեն անգամ, երբ գտնվենք այս հարկի տակ և երբ նորից լսենք նրա զանգերի քաղցրը ձայնը, երախտագիտությամբ կհիշենք մեր ճեմարանական տարիները։ Դուք, Վեհափառ Տե՛ր, այնքան ջերմ ու հայրական հոգատարությամբ և գուրգուրանքով խնա-

մեցիք մեզ և արիք Ձեր կարելին, հարստացրիք մեր միտքը, հոգին ու սիրտը և առավելագույն չափով մեզ դոտեպնդեցիք մեր ապագա ծառայության ճանապարհի վրա։ Մեր դասախոսները նույնպես չզլացան մեզ ջամբելու իրենց հավատը, գիտությունն ու հայրենասիրությունը։

Երախտագիտական խոսք ենք ուղղում նաև մեր շատ սիրելի վերատեսուչ սրբազան հորը՝ Հայկազուն արքեպիսկոպոսին, և նրա անմիջական գործակից, Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանին և հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանին, որոնք իրենց անմիջական հսկողությամբ և հոգատարությամբ աշխատեցին ազնվացնել մեր նկարագիրը։

Վեհափառ Տե՛ր.

Հավաստիացնում ենք Ձեզ, որ մենք կկատարենք Ձեր սուրբ հրամանները, կաշխատենք արդարացնել Ձեր բոլոր հույսերը։

Հայցում ենք, որ մարդասերն Աստված տա մեզ ուժ և շնորհք, որպեսզի այսուհետև ևս կարողանանք կյանքի վերածել մեզ տրված և արժանավորապես կրել մեր ընդունած քաղցր լուծը։

Վճռական այս րոպեին, երբ կանգնած ենք մի նոր կյանքի բախտորոշ ու լուրջ անկյունադարձի վրա, դոտեպնդվելու և արիաբար ընդունելու համար առաջիկա մեր կյանքի բոլոր փորձություններն ու դժվարությունները, դրանք դիմագրավելու և հաղթահարելու համար, թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, որ իմ և իմ ընկերների կողմից համբուրեմ Ձերդ Վեհափառության Ս. Աջը։ Այդ Ս. Աջը, այս վեհ ու հանդիսավոր պահից սկսած, թող ուղեկցի մեզ մեր ամբողջ ծառայության կյանքի ընթացքում և առաջնորդ ուղեցույցը հանդիսանա մեզ համար մեր գործունեության բոլոր բնագավառներում»։

Հանդիսության երկրորդ բաժնի սկզբում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը կարդաց Ճեմարանի 1960—1961 ուսումնական տարվա ընդհանուր գործունեությունը ներկայացնող հետևյալ զեկուցագիրը.

«Ձերդ Ս. Օծություն.

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նվիրական հարկին տակ, բոլորեցինք ուսումնական տարի մը ևս, խաղաղ և բեղմնավոր։

Անցնող ուսումնական տարին, Ձերդ Ս. Օծության արտասահման գտնվելուն պատճառով, Հոգևոր Ճեմարանը կբացվեր մեկ ամիս ուշացումով, հոկտեմբեր 9-ին։ Այս ուշացումը սակայն արգելք չեղավ ուսումնական մեր ծրագրի իրագործման։ Ճեմարանի վերաբացման առթիվ գումարված ուսուցչական առաջին ժողովին մեջ, որոշեցինք ամբողջությամբ կատարել 1960—1961 թվականի ուսումնական ծրագիրը։

Վեհափա՛ռ Տեր.

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի անունն ու հմայքը շատ բարձր են։ Ճեմարանը մոտ է մեր հավատացյալ ժողովուրդի սրտին։ Ձերդ Ս. Օծությունը, իր կատարած հովվապետական ճամբորդություններուն մեջ, ականատես եղած է այն գուրգուրանքին և ուշադրության, որ արտասահմանը ունի այս սրբազան տան՝ Ս. Էջմիածնի և անոր Հոգևոր Ճեմարանի նկատմամբ։ Ես անձնապես այս երկու տարիներու ընթացքին, երբ Ձեր հրամանով արտասահման գտնված եմ, կկայեմ նույնը և չեմ կրնար նկարագրել այն սերն ու վստահությունը, որ ունի արտասահմանի ամբողջ հայությունը մեր Հոգևոր Ճեմարանին հանդեպ։

Հոգևոր Ճեմարանը և մեր բոլոր դպրեվանքերը Հայ Եկեղեցվո կենսունակության երաշխիքն են և մեր ապագան։

Մեր Եկեղեցին այսօր կարիքն ունի պատրաստված, հավատավոր հոգևորականներու, բազմակողմանիորեն զարգացած։

Այս ընդհանուր խորհրդածություններեն հետո, Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք ամփոփվիլ Հոգևոր Ճեմարանի ներքին գործերուն և կյանքին շուրջ։

Ա) Շրջանավարտ դասարան.— Այս տարի Հոգևոր Ճեմարանեն շրջանավարտ կելլան չորս աշակերտներ, որոնք անցնող տարվան դեկտեմբերին ձեռնադրվեցան սարկավագ, Ձերդ Սրբության բարեհաճ հրամանով։ Շրջանավարտները հաջողությամբ հանձնեցին իրենց կուրսային և ավարտական քննությունները։ Շրջանավարտ սարկավագներուն հանձնեցինք դիպլոմային աշխատանքի նյութեր, որոնց վրա պիտի աշխատին այս արձակուրդի շրջանին և վերատեսչության պետք է հանձնեն իրենց ավարտած աշխատությունները, ստանալու համար իրենց վկայականները։

Այսպես, բարեշնորհ Հակոբ սարկավագ Գյոքչյանի նյութն է «Խրիմյան Հայրիկի մատենագրական վաստակը», Անաստաս սարկավագ Մովսիսյանի նյութը՝ «Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը որպես ազգագրագետ», Արշավիր սարկավագ Շաքարյանի նյութը՝ «Գեորգ Զ Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», Կարապետ Սուքիասյանի նյութն է «Գիրք թղթոցի բովանդակության վերլուծությունը»։

Բ) Կրոնական և եկեղեցական կյանք.— Շատ բնական է, որ կրոնական վարժարանի մը աշակերտները ունենան իրենց միջավայրին հատուկ կենցաղավարություն։ Մեր ուսանողները կարգապահ, պաշտոնասեր ու-

սանողներ են, որոնք միշտ և սիրով կատարած են իրենց ժամապաշտական բոլոր պարտականությունները, մասնակցելով անխափան ժամերգություններուն և սուրբ պատարագներուն: Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմն ալ միշտ ջանացած է ուսանողության մեջ մշակել ճշմարիտ հոգևորականի ազնիվ հոգի, բարի ընդունակություններ:

Գ) Կրթական կյանք.— *Այս տարի ալ, շնորհիվ ձեռք առնված միջոցներու, կրթական մեր գործը ընթացավ կանոնավոր կերպով և հասավ լավագույն արդյունքներու, ինչպես ցույց տվին կիսամյա և ամավերջի քննությունները: Վերատեսչությունը և ուսուցչական կազմը խղճի մտոք ջանացին արդյունավորապես իրագործել մեր տարեկան կրթական ծրագիրը իր ամբողջության մեջ:*

Դ) Մշակութային կյանք.— *Հոգևոր Ճեմարանեն ներս մշակութային կյանքը զուգընթաց է կրթականին: Այս տարի ալ հաճախ ունեցանք մեր ամսօրյա հավաքույթները, բանախոսությունները, գրական և գեղարվեստական երեկույթները, դասերեն դուրս, հինգշաբթի և շաբաթ օրերը, մեծ մասամբ ուսանողներու նախաձեռնությամբ կազմակերպված: Այս տարի ունեցանք Ճեմարանի մանդոլինիստներու խմբակը 9 հոգիե բաղկացած, որ միշտ մասնակցեցավ մեր գեղարվեստական զանազան հավաքույթներուն:*

Ամիսը մեկ-երկու անգամ մեր ուսանողությունը հավաքաբար տարինք Երևանի Պետական Թատրոն, Օպերա, կամ Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ համերգներուն:

Ե) Առողջապահական կյանք.— *Հոգևոր Ճեմարանը ունի իր բուժարանը և հիվանդանոցի բաժինը հինգ մահճակալով: Բուժարանի ղեկավարն է Բ դասարանի ուսանող Ժիրայր Գալփակյանը, որ բուժական անմիջական խնամք կտանի թե՛ ուսանողներուն և թե՛ միաբանության անդամներուն: Այս տարի Ճեմարանեն ներս լուրջ հիվանդներ չենք ունեցած:*

Զ) Զբոսապտույտներ.— *Անցնող տարվան մեծ արձակուրդին, ուսուցչությունը և ուսանողությունը չորս օր տևող պտույտներ կազմակերպեցին Հայաստանի հյուսիսային կողմերը, այցելելով մեր պատմական մենաստանները՝ Հաղբատը, Սանահինը, Գոշավանքն և ուրիշ վանքեր: Տարվան ընթացքին միօրյա պտույտներ ալ կազմակերպեցինք դեպի Խոր Վիրապ, Գեղարդ, Ապարանի եկեղեցիները, Սաղմոսավանք, Հովհաննավանք և պատմական այլ հուշարձաններ: Այս պտույտներու ընթացքին լրացուցիչ բացատրություններ տրվեցան ուսանողության իրենց այցելած վայրերուն մասին:*

Է) Գրադարան-ընթերցարան.— *Գոհունակությամբ պետք է հայտարարեմ, թե այս տարվան ընթացքին ավելի լավ կազմակերպվեցավ և ընդարձակվեցավ Ճեմարանի գրադարան-ընթերցարանը շնորհիվ Վեհափառ Հայրապետի կրթանվեր ջանքերուն: Մեր նախկին համեստ գրադարանը ընդարձակվեցավ մեծ սրահով մը, նոր գրապահարաններ շինվեցան և բոլոր նոր ստացված գրքերը դասավորվեցան: Այս ընդարձակումով ուսանողները ունեցան իրենց առանձին սերտարան-ընթերցարանը: Մեր գրադարանն այժմ ունի շուրջ 17 000 հատոր գրքեր: Գոհունակությամբ և շնորհակալությամբ պետք է հիշենք նաև այն նախանձախնդրությունը, որ Վեհափառ Հայրապետը ցույց տվավ Հոգևոր Ճեմարանի հանդիսության մեծ դահլիճի վերանորոգման և բարեկարգման առթիվ: Այժմ իսկապես տիպար դահլիճ մը ունինք, որ ներկայանալի է ամեն տեսակետով:*

Ը) Մարզական կյանք.— *Մարմնամարզը Ճեմարանեն ներս պարտավորիչ է, ամեն առավոտ եկեղեցի երթալեն առաջ: Մարզիչ պր. Հարություն Սիմոնյանի անխոնջ ջանքերով կկազմավորվին մեր ուսանողներու մարմինները: Ունինք մարմնամարզի և խաղի հատուկ սրահ մը վարժարանեն ներս: Ուսանողներու սիրած խաղերն են վոլի-բոլ, պինգ-պոնգ և բասկետ-բոլ: Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հունիսի 1-ին տեղի ունեցավ մարզահանդես մը: Տղաները բաժնված էին երկու խումբերու՝ «Նաիրի» և «Արագած»: Դաշտահանդեսի մեջ հաղթական հանդիսացավ «Արագած»-ը:*

Թ) Ուսուցչական կազմ.— *Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը դրեթե անցյալ տարվանն է: Ունեցանք հետևյալ փոփոխությունները. դոկտ. Վարագ Առաքելյանի բազմազբաղ ըլլալուն պատճառով, գրաբարի դասավանդման մեջ զայն փոխարինեց պր. Սամվել Անթոսյանը. տիկին Մարիա Գրիխուլսկայայի (ռուսաց լեզու) փոխարինեց պր. Գ. Գևորգյանը: Ֆրանսերենի ուսուցիչ պր. Գ. Շահինյանին փոխարինեցին պր. Ե. Վարդերեսյանը և պր. Շահբազյանը:*

Ժ) Նոր ուսանողներ.— *Այս տարվան հունվար 3-ին Լիբանանեն և Սուրիայեն Ճեմարան ուսանելու եկան վեց նոր աշակերտներ:*

ԺԱ) Նոր ձեռնադրություններ.— *Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, ուսուցչական կազմին և ուսանողության համար ուրախալի օր մըն էր հունիսի 4-ը, երբ Ճեմարանի նախկին շրջանավարտներ և Մայր Աթոռի չորս միաբաններ արժանացան Ձերդ Ս. Օծության շնորհաբաշխ ձեռնադրության և սուրբ օծ-*

ման, վերակոչվելով Հովհաննես սարկավագ Եղիայանը՝ Գրիգոր աբեղա, Խորեն սարկավագ Պալյանը՝ Մեսրոպ աբեղա, Հակոբ սարկավագ Պողապալյանը՝ Ներսես աբեղա և Հակոբ սարկավագ Գարաջյանը՝ Եղիշե աբեղա։ Բոլորիս սրտագին մաղթանքն է, որ նորընծաները ըլլան մաքրակենցաղ հոգևորականներ և «մշակք առանց ամօթոյ»։

Վեհափա՛ռ Տեր·

Ահա այս է համառոտ պատկերը Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1960—1961 ուսումնական տարվան գործունեության։ Մեր սրտագին շնորհակալությունը կներկայացնեմ, Վեհափա՛ռ Տեր, նախ Ձերդ Ս. Օծության, Գերագույն Հոգևոր Խորհուրդի հարգելի անդամներուն և Մայր Աթոռի սրատվարժական միաբանության։

Հուսկ ապա շնորհակալություն մեր սիրելի ուսուցչական կազմին, մեր օգնական Տ. Հովհաննես քահանա Մարությանին և Մեսրոպ աբեղա Պալյանին։ Սրտագին շնորհակալություններ մեր Ճեմարանի բոլոր բարեբարներուն, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի»։

Ապա վերատեսուչ սրբազանը հրապարակեց անունները այն ուսանողների, որոնք հաշվետու ուսումնական տարում հանդիսացել էին ուսման մեջ գերազանցիկներ և առաջավորներ։

Ուսման մեջ առաջին և երկրորդ հանդիսացողները արժանացան նվերների։

Գ լսարանում ուսման մեջ առաջին էր հանդիսացել Հակոբ սարկավագ Գյոքչյանը, երկրորդ՝ Անաստաս սարկավագ Մովսիսյանը և Արշավիր սարկավագ Շաքարյանը։

Բ լսարանում առաջին էր հանդիսացել Ժիրայր Կոնսուլյանը, երկրորդ՝ Զոհրապ Շամլյանը և Կարպիս Սերայտարյանը։

Ա լսարանում առաջին էր հանդիսացել Վռամշապուհ Ճիհանյանը, երկրորդ՝ Հովհաննես Աշճյանը։

Բ դասարանում առաջնություն էր շահել Ժիրայր Գալփակյանը, երկրորդ՝ Հարություն Մարաշլյանը։

Ա դասարանում առաջինն էր Ղևոնդ Վարդանյանը, երկրորդ՝ Գրիգոր Ագբյանը։

Ուսման մեջ ամենաբարձր գնահատականն ստացել էր Ա լսարանի ուսանող Վռամշապուհ Ճիհանյանը՝ 9,58 ընդհանուր միջինով։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, Իր գոհունակությունը հայտնեց և շնորհավորեց Հոգևոր Ճեմարանի վերատեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը՝ հաշվետու ուսումնական տարում ձեռք բերված լավագույն արդյունքների համար և Իր ուրախությունը հայտնեց այն առողջ, գիտակից եկեղեցասիրական և հայրենասիրական ոգու համար, որ տիրում է Հոգևոր Ճեմարանից ներս։

Իր հայրական խոսքի վերջում, Վեհափառ Հայրապետը, օրհնելով Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմին և ուսանողության, բարեմաղթեց նորանոր հաջողություններ առաջիկա տարիներում ուսման և դաստիարակության բնագավառներում։

Հոգևոր Ճեմարանի 1960—1961 ուսումնական տարվա ամավերջի հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։